

ու կէս մը դուրս են՝ մկրատով կտրէ ,
ասով չեն կրնար բազմանալ : Իսկ թէ
որ ցորեկը ուզենաս բռնել , չորս կամ
հինգ ոտնաչափ երկայնութեամբ սը-
րածայր ցից մը առ , ու թիզ մը խոր
հողուն տակը խոթելով՝ քառորդի մը
չափ ժամանակ շարժէ . ան շարժմուն-
քով գետնի մարերը դուրս կ'ելլեն .
իսկ թէ որ ծաղկի սնտուկի կամ թա-
ղարի մէջ են որդերը , փայտով մը քո-
վընտի տասը վայրկեանի չափ կրնաս
զարնել , Ծախները մէկէն հողուն ե-
րեսը կ'ելլեն : Սմանք կանանչ ընկոյ-
զը քանի մը օր ջրի մէջ կը թողուն ,
ու ետքը ան ջրով պարտէզը կ'ոռոգեն ,
նոյնպէս Ծախները դուրս կ'ելլեն :

Սրէն : — Դաղկի սնտուկի մը
մէջ քիչ մը օշինդր՝ դնես նէ , մըջիւն-
ները կը փախչին . եղն ալ մըջիւնին շատ
փնասակար է . անոր համար մըջնոցը
աւրելու համար ջրախառն եղ կրնաս
գործածել . թէ որ եփ ելած ջուր լե-
ցրնես , բոլորովին կը ջարդուին : Երբ
որ կ'ուզես որ մըջիւնը ծառի վրայ
չելլէ , ծառը կաշուն նիւթով մը պա-
տելու և կամ եղով օծելու է , ու քա-
նի որ չորնայ՝ նորոգելու է . նոյնպէս
օգտակար է գզած բուրդը : Արնաս
նաւ սնտուկին տակը հողէ աման մը
դնել՝ մէջը ջուր լեցուցած , կամ խո-
նաւութիւն սիրող բոյսերուն թա-
ղարները ջրով լեցուն ափսէի մը մէջ
դնել :

Խիտնջ , Կղիւնջ : — Խիտնջը , կո-
ղիւնջը և ասոնց նման կենդանիները
ջարդելու համար , մանր բոյսերուն
չորս կողմը կիր ցանէ . կենդանիները
ուզելով բոյսերը ուտել՝ կիրին կը մծ-
տենան ու կ'այրին . աս կիրը մարած
ըլլայ նէ՝ նորոգելու է : Խիտնջ բռնե-
լու ատենը աւելի գարնան ու աշնան
առաւօտներն ու գիշերներն են , կամ
երբոր օդը զով ու անձրևոտ է : Սմանք
խիտնջ շատ եղած տեղը մէկմէկէ չա-
փաւոր հեռաւորութեամբ ցորենի
թեփ կը դիզեն , ու երբոր խիտնջնե-

րը անոնց վրայ ժողովուին՝ կիրով կ'այ-
րեն :

ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ

Պատիւոյն՝ 1 ու Էնկերիէն՝ 2 փաստերը :

Պատիւ բան մը չկայ աշխարհքիս
երեսն որ ամենեւին պակասութիւն
մը , կամ անոր ներհակ աղէկութիւն
մը չունենայ . բանը աս է որ մարդիկ
շատ անգամ մէկ բանին միայն պակա-
սութիւններուն այելով՝ աղէկութիւն
ները չեն տեսներ , շատ անգամ ալ
աղէկութիւնները միայն կը դիտեն ու
պակասութիւններուն աչք կը գոցեն .
որով գրեթէ իրենք իրենց կամօքը կը
փնասուին ու չեն իմանար , կամ չեն
ուզեր հասկնալ : Եւ տեսակ բանե-
րուն գլխաւորներէն մէկն է նաւ ծխա-
խոտին ու ընչադեղին գործածութիւնը :
Եսոր օգուտները բժիշկներուն հար-
ցրնես նէ խիստ քիչ են , գործածող-
ներուն հարցրնես նէ՝ խիստ շատ . իսկ
փնասները՝ թէ բժիշկներուն և թէ
գործածողներուն հարցրնես՝ անթիւ
է կ'ըսեն : Եսոր համար է որ աս բոյ-
սիս գործածութիւնը մարդկանց մէջ
սկսելուն պէս՝ շատ թագաւորներ
չթողուցին որ իրենց երկիրը մտնէ ,
վասն զի յայտնի տեսան որ շատ փնաս
կ'ընէ թէ մարդուս առողջութեանը
և թէ հարստութեանը . առջի գործա-
ծողը հասարակ ժողովուրդը եղաւ ,
ու երկար ատեն գիտուններն ու ազ-
նուականք և եկեղեցականք աս բա-
նիս առաջը առնելու ջանք ըրին՝ ցու-
ցրնելով թէ որչափ փնասակար է մար-
դուս առողջութեանը : Ենգղիոյ Յա-
կոբ Ա թագաւորը սաստիկ պատիժներ
դրաւ ծուխ քաշողներուն . Օւիցե-
րիի երկիրը ծուխ քաշողները չարա-
գործ կը սեպուէին . Ուրբանոս Ըսրը-
բազան քահանայապետը եկեղեցւոյ

1 փելի :

2 Սայլանիկ օղ :

1 Թիւթիւն :

2 Էնկիէ , պարոն օթոն :

մէջ ծուխ գործածողները կը բանա-
դրէր . ու 1634^{ին} Ռուսաստանի մէջ
ծուխ քաշողները մահապարտ կը սե-
պուէին : Եւ այց որչափ որ ջանք ըրին
թագաւորները դէմը առնելու , այն-
չափ աւելի գործածութիւնը տարա-
ծուեցաւ . կարծես թէ աս բանս ար-
դիւելու համար Վաղղիոյ ի ուղղովի-
կոս ժ.Զ. Թագաւորին ըրածին պէս ը-
նելու էր , որ ուղեւորվ գետնախնձորի
մշակութիւնն ու գործածութիւնը
Վաղղիոյ մէջ ծաղկեցնել՝ արգիւեց
որ աս բոյսը ամենեւին իր երկիրը
չմտնէ . անով քիչ ատենուան մէջ բո-
լոր երկիրը գետնախնձորով լեցուե-
ցաւ : Եւ մացան տէրութիւնք թէ սպառ-
նալիք չգորեր . անոր համար ծխախո-
տին վրան ծանր տուրքեր ու մաքսեր
դրին . աս բանիս ալ ուրիշներուն օ-
րինակ տուողը Վաղղիոյ Թագաւորն
եղաւ : Եւ կէ ետքը ալ մեծամեծները
չնայեցան ծխախոտի փասսներուն , հա-
պա Թագաւորական գանձին շահը
նայելով՝ ջանացին որ գործածութիւնը
տարածեն :

Եւ բոյսը երկու կերպով կը գործա-
ծեն , այսինքն փոշին քթերնին քաշե-
լով՝ ու տերեւներուն ծուխը ծծելով .
ատենով ասոր ծղօտը , կամ նաեւ տե-
րեւներուն ջղերը և կամ չորցած տե-
րեւները ծամելու համար ալ կը գործ-
ածէին Եւրոպացիք . բայց աս այլան-
դակ զուարճութիւնը հիմա գրեթէ
դադրած է : Եւ ժշկական դեղերու մէջ
ալ երբեմն կը մտնէ աս բոյսը . վասն
զի կ'ըսեն բժիշկները թէ աս բոյսը
ընդհանուր երկու տեսակ ազդեցու-
թիւն ունի մարդուս գործարաննե-
րուն վրայ . այսինքն մէյմը նիւթա-
պէս գրգռիչ , մէյմ՝ ալ գլխու ոյժ
տուող . աս պատճառաւ կ'ըսեն թէ
ծխախոտ չատ ծամողին կամ ծուխը
քաշողին բերնին մէջ առջի բերան
տաքութիւն ու լորձունք կը գոյանայ ,
երբեմն նաեւ ընդերաց՝ կոկորդի ու
լեզուի բորբոքումն : Եւ երբոր մէկը
ան լորձունքը կլլէ , ծխախոտին ոյժը
աւելի կ'իմացուի . վասն զի ջղերը կը

տկարանան . ուստի աչուրներուն բի-
բերը կը լայնան , տեսութիւնը կը
տկարանայ ու գլուխը կը պտրտի , վը-
րան թմրութիւն կուգայ , սիրտը կը
խառնուի , փորլուծութիւն կ'ունե-
նայ , կը դողդղայ , գոյնը կը նեւեւ ,
չափէ դուրս կը քրտնի , երակը մանր
ու կամաց կամաց կը զարնէ , բոլոր
անդամները կը թուլնան ու կը թրմ-
րին , երբեմն ալ ինչուան կը մեռնի :
Եւ ալ է որ մէյմը վարժեւէն ետքը
մարդս աս ամէն նշանները չիմանար ,
բայց օր օրուան վրայ լորձունքը պակ-
սելով՝ մարսողութիւնը կը տկարա-
նայ , որով ծխախոտ քաշողներուն ու
ծամողներուն ստամոքսը տկար կ'ըլ-
լայ : Եւ պէս զի աս տկարութեան դէ-
մը առնեն , ու ծուխէն եղած ծարաւը
մարեն , չափէ դուրս գինիի ետեւէ
կ'ըլլան . անոր համար փորձուած բան
է որ ծխախոտի ու ընչադեղի սաստիկ
ետեւէ եղողները գինեմով ալ կ'ըլլան :

Եւ երբ սովորական գործածութիւ-
նը աս է որ փոշին քթերնին կը քա-
շեն . ամէն վիճակի մարդկանց մէջ
աս զգուելի սովորութիւնս ունեցող-
ներ կան , ու վարժողներուն այնչափ
բնական եղած է որ աւելի դիւրին
կ'երեւնայ իրենց կերակրէ ետ կենալը՝
բան թէ ընչադեղէ . ոչ ան աղտոտու-
թիւնը աչքերնուն կ'երեւնայ , որով ի-
րենք ու իրենց հազուստը կ'աղտոտի ,
ոչ ան փուճ՝ ծախքը որ աւելի օգտա-
կար բանի մը կրնային տալ , և ոչ առող-
ջութեան փասսակար ըլլալը : Եւ տո-
տութեանն ու ծախքին խօսք չունինք
կ'ըսեն . բայց առողջութե փասսակար
պիտի չըլլայ , ինչու որ երբեմն բժիշկ-
ներն ալ կը հրամայեն . անկէ զատ՝ ըն-
չադեղ քաշողը ինքն ալ կը տեսնէ որ
մէկէն գլուխը կը թեթեւայ , աչուր-
ները կը բացուին , միտքը կը զուար-
թանայ : — Եւ ալ է որ ընչադեղը զօ-
րաւոր դեղերէն մէկն ըլլալով՝ աս ու-
ժերը ունի , անոր համար ալ բժիշկ-
ներ կան որ ոմանց հարկաւոր ճանչ-
նալով կ'ապսպրեն , ինչպէս որ կ'ա-
պրսպրեն նաեւ ուրիշ թուանաւոր ու

փնասակար խոտերը : Բայց որ բժիշկը կայ որ ըսէ թէ ընչադեղը այնպէս հարկաւոր է մարդուս՝ ինչպէս որ կերակուրը . կամ որ բժիշկը կայ որ չըսէ թէ ամէն բանին ալ չափազանց գործածութիւնը գէշ է նէ՝ ընչադեղինը ևս առաւել : Եւ յայտնի է որ ընչադեղ քաշողին քիթը կը քերուի , պէտք չեղած ատեն կը փռնդտայ ու աչուրներէն արցունք կուգայ : Եւսեն թէ ընչադեղի շատ գործածութենէն սաստիկ փռնդտալով՝ ոմանք նաև յանկարծակի մեռեր են : Շատ անգամ ալ մարդուս քիթը չարաչար կը ցաւցնէ , ու խռոչներուն մէջ ուռոյցներ կը գոյանայ . մարդ եղած է որ սաստիկ ընչադեղ քաշելէն ինչուան քիթը փտտեր է : Եւ դրսի հիւանդութիւններէն ետքը կուգան ներքին փնասները . ով որ ընչադեղի չարաչար վարժած է՝ շատ անգամ ապուշ ու անզգայ կ'ըլլայ . վասն զի անով մտաւորական կարողութիւնները կը տկարանան , ու զգայարանները կը բթանան . քիթը հոտ չառնէր , ականջը չլսէր , բերանը համ չառնէր , աչքը բան չտեսներ : Եւմ ըսեր թէ խիստ քիչ գործածուած ընչադեղը մասնաւոր պարագաներու մէջ օգտակար չըլլայ . վասն զի երբոր արեան յորդութեամբ մէկուն գլուխը թմրի , քիչ մը ընչադեղ քաշելով կրնայ զգաստանալ . երբոր մէկուն քիթէն խիստ շատ արիւն կը վազէ , քիչ մը ընչադեղ քաշելու ըլլայ նէ՝ արիւնը կրնայ դադրիլ . հապա մեր խօսքը այնպիսիներուն վրայ է որ աւելորդ տեղը սովորութիւններ են անդադար աս փոշուով քթերնին լեցնելու : Եւսպիսի հընցած սովորութեան մը դէմ շատ երկայն պէտք էր խօսիլ , ինչպէս որ ուրիշ շատ իմաստուն մարդիկ խօսեր են . բայց մենք աս անգամ այսչափով պէտք է գոհ ըլլանք : Եւ իայն թէ խօսքերնիս անկատար չձգելու համար ըսենք թէ ծովի քաշողները , ինչպէս նաև ընչադեղ առնողները , իրենք զիրենք ասով կ'արդարացնեն թէ

ձանձրութեան դէմ մեծ դեղ է , մարսողութեան կ'օգնէ , շատ հիւանդութիւններէ կը պահէ , մաղասէ և ուրիշ աւելորդ հիւթերէ կ'ազատէ , ինչպէս նաև սաստիկ գիրութենէ ու ակուայի ցաւերէ և այլն . բայց գիտնան որ քաջ բժիշկներու խօսքին նայելով՝ ասոնք ամէն ալ խաբէական օգուտներ են , ու ըրած փնասներուն հետ բաղդատելով՝ ամենեւին ոչինչ :

Վասն զի ով չգիտեր որ առողջութեան շատ փնասներ ընելէն զատ՝ աս բոյսը մեծ փնաս կուտայ նաև մարդկանց հարստութեւ . այնպիսի մարդիկ կը գտնուին որ բոլոր տարուան ընչադեղի պաշարին համար 400 դահեկանէն աւելի ծախք կ'ընեն , իսկ ծովի համար անկէ ալ աւելի : Եւ այժմ խօսքերնիս Պուքանան փիլիսոփային խօսքովը լմնցնենք որ կ'ըսէ աս փնասակար բոյսին դէմ .

Եւրաքա ըզձեռն 'ի տրնկոյն ,
Խից ըզբերանդ և զականջ .
Նեկտարն այն ժանտ է քեզ թոյն ,
Եւ զքեւ մահ չարատանջ :

Եւ ալ ըսենք որ ընչադեղին վրայ խիստ շատ գրուածքներ ելած են Եւրոպայի մէջ , ինչպէս որ ըսինք , ու ինչուան հիմայ ալ կ'ըլլեն . միայն աս տարբերութիւնը կայ գիտելու որ ատենով վրան գովեստ գրողները շատ աւելի են եղեր քան թէ վար զարնողները . իսկ հիմա անոր հակառակն է :

Բայց ինչ ըսենք անոնց որ ընչադեղը գետնէ գետին կը զարնեն , ու իրենք քաշելէն ետ չեն կենար : Եւսանկ Ֆակոն անունով մէկը , որ Բադղիոյ Պուգովիկոս ԺԴ Թագաւորին բժշկապետն է եղեր՝ նախատինք չէ մնացած որ չտայ ընչադեղին . և սակայն ինքը անդադար կը քաշէ եղեր : Աստի աղէկ կ'ըսեն եղեր իրեն թէ « Եւրաք քու քիթիդ հասկըցուր ատ պատճառները » :